ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության
մասնակիցների հիմնադիր ընդհանուր ժողովի
«26» նոյեմբերի 2013թ. թիվ 1 որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է
«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության
մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի
2025թ. օգոստոսի 21-ի թիվ __ 34 որոշմամբ
Դիտորդ խորհրդի նախագահ, ընդհանուր ժողովի
նախագահող՝ Անդրեաս Վիմմեր

_____

Գլխավոր գործադիր տնօրեն -Վարչության
նախագահ՝
Արման Վարդանյան

_____

Arman Vardanyan
Digitally signed by Arman Vardanyan
Date: 2025.09.12 16:11:18 +04'00'

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2025.09.16 17:18:17 AMT
Reason: Գրանցած է 10.09.2025թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

APPROVED
by the General Meeting of Participants of "C-QUADRAT Ampega Asset Management Armenia" Limited Liability Company by Decision N 1 dated 26 November 2013

AMENDED
by decision N 34 dated August 21, 2025 of the Extraordinary General Meeting of Participants of "C-QUADRAT Ampega Asset Management Armenia" Limited Liability Company

Chairman of the Supervisory Board and Chair of the General Meeting
Andreas Wimmer

Chief Executive Officer
Arman Vardanyan

REGISTERED
with the Central Bank of RA

Chaiman of the Central Bank of RA
Martin Galstyan

"C-QUADRAT Ampega Asset Management Armenia"
LIMITED LIABILITY COMPANY
CHARTER
(New edition)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումը (հայերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով (այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն) և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.6.Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը

1. GENERAL PROVISIONS

1.1 **"C-QUADRAT Ampega Asset Management Armenia"** Limited Liability Company (hereinafter referred to as the Company) is an economic enterprise representing a commercial organization, the charter capital of which is divided into shares in numbers as specified under this Charter. The participants of the Company cannot be held liable for the obligations of the Company and are only responsible for the risks related to the activities of the company within the limits of the value of their deposit investments.

1.2. The legal capacity of the Company arises from the moments of its establishment (state registration) and terminates from the closing of its insolvency (recording on insolvency of the Company in the state register):

1.3. The Company has its firm name (in Armenian and English scripts), as well as round seal, stamps and letterheads with its firm name and other requisites as defined under the legislation of the Republic of Armenia, as well as a logo, trademarke and brand names registered according to procedures specified by RA legislation, and other names and means of identification.

1.4. While performing its activities, the Company shall be governed by the laws of the Republic of Armenia Civil Code, other legal acts of Republic of Armenia (hereinafter – RA legislation) and the present Charter.

1.5. The relations between the participants and the Company shall be governed by RA legislation and the present Charter.

1.6. The Company shall be liable for its obligations with the full property in its ownership. The Company shall not be liable for the obligations of its participants.

պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.7. Ընկերության մասնակիցները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝ **«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»** Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
կրճատ՝ **«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»** ՍՊԸ
անգլերեն լրիվ՝ **"C-QUADRAT Ampega Asset Management Armenia"** Limited Liability Company
կրճատ՝ **"C-QUADRAT Ampega Asset Management Armenia"** LLC

1.9. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 37, 4րդ հարկ:

1.7. The participants of the Company shall not be liable for the obligations of the Company.

1.8. The Company's firm name is
In full in Armenian – **«Ց-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն**
In short – **«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ**
In full in English – **"C-QUADRAT Ampega Asset Management Armenia"** Limited Liability Company
In short **"C-QUADRAT Ampega Asset Management Armenia"** LLC

1.9. The Company is located at and its legal address is at Hanrapetutyan str., 37, 4th Floor, Yerevan, Republic of Armenia.

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ՀՀ կենտրոնական բանկից ստացված լիցենզիայի հիման վրա իրականացնում է ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեություն, իսկ ՀՀ կենտրոնական բանկից ստացված թույլտվության հիման վրա՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործունեություն: Ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից թուլտության ձեռք բերման դեպքում իրականացնում է արժեթղթերի փաթեթի կառավարման և խորհրդատվության տրամադրում կապված իր կողմից կառավարվող արժեթղթերում ներդրումների հետ: Ընկերությունն իրավունք ունի իրականացնել նաև ՀՀ օրենսդրությամբ թույլատրված այլ գործունեություն:

2. THE OBJECTIVE OF THE COMPANY AND ITS LEGAL CAPACITY

2.1. The company is established for the purposes of gaining profit through engagement in economic activities.

2.2. The Company may conduct investment fund management activities in accordance with the procedure stipulated by RA legislation and on the basis of the license granted by RA Central Bank and pension fund management activities on the basis of the permit granted by RA Central Bank. Upon the receipt of the permits from the RA Central Bank the Company may also perform securities portfolio management and consulting with respect to the investments in the securities under its management. The Company may conduct other activity permitted by RA legislation.

2.3 Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և սահմանված կարգով:

2.4. Ընկերությունը իր բոլոր գործառնություններն իրականացնում է անկանխիկ եղանակով:

2.3. The rights of the Company may be limited only in circumstances provided and pursuant to the procedure defined by the RA legislation.

2.4. The Company performs all of its transaction through non-cash means.

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. LEGAL STATUS, RIGHTS AND REPSPONSIBILITIES OF THE COMPANY

3.1.Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.1. As of the moment of state registration the Company acquires the status of a legal person. The Company owns separate assets and bears responsibility for its liabilities in the amount of assets owned thereby, the Company can sign contracts on its behalf, acquire and exercise property and non-property rights, bear liabilities and act in the court as claimant and defendant.

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկային հիմնարկություններում՝ հաշվարկային և այլ հաշիվներ (դրամով, տարադրամով): Ընկերության բոլոր բանկային հաշիվները տնօրինվում են Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի և առնվազն Ընկերության Վարչության մեկ այլ անդամի համատեղ ստորագրությամբ:

The Company shall have an independent balance sheet, can in due order open bank accounts at banks in the Republic of Armenia or foreign countries (in local and foreign currencies). All the bank accounts of the Company shall be managed by double signature of the Chief Executive Officer and at least one other member of the Executive Board.

3.2.Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր և կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

3.2. The Company can be the founder (partner) of another company (subsidiaries) and partnership, except in cases specified under the RA legislation.

3.3.Ընկերությունն իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

3.3. The Company shall be entitled to establish separated subdivisions (branches and representations) within the territory of the Republic of Armenia and in foreign countries.

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկներ:

The Company may establish an institution for conducting administrative, social-cultural, educational or other non-commercial activities.

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները

The separated subdivisions and institutions of the Company shall not be considered as legal entities,

իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

shall operate based on the charters approved by the Company, and the managers thereof shall act based on power of attorney granted by the Company.

3.4.Ընկերությունն իրավունք ունի՝

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով ստացված լիցենզիայի և թույլտվության հիման վրա իրականացնել ներդրումային (այդ թվում՝ կենսաթոշակային) ֆոնդերի կառավարման գործունեություն, ինչպես նաև ՀՀ օրենսրությամբ թույլատրված այլ գործունեության տեսակներ:

3.4 The Company shall be entitled to

- Acquire assets, including securities, dispose of, own and manage the same, including the revenues gained there from in by any means not prohibited by the RA legislation and relevant statutory acts.
- Perform investment fund (including pension fund) management activities based on the license and permit acquired under the procedure set by RA legislation, as well as other activities permitted by the RA legislation.

- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

- independently raise funds, including through attraction of borrowings, receive bank and other commercial loans in the Republic of Armenia and foreign countries, in particular in foreign currency, issue securities on its behalf and distribute those pursuant to the procedure defined by the law;

- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

- alienate, lease, exchange, or assign its property rights in any other way not contradicting the legislation, act as a pledge and pledgor,

- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

- exercise other rights defined by the legislation and the present Charter.

3.5.Ընկերությունը պարտավոր է՝

- ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ,

3.5. The Company shall

- maintain accounting and produce reports based on the procedure defined under the RA legislation and relevant statutory acts;

- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,

- execute labour agreements with the employees of the Company;

- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ

- make a declaration on the Company's liquidation pursuant to the procedure defined by the law, when it is impossible to satisfy the legitimate material claims of the creditors;

բավարարել պարտապանների օրինական գույքային պահանջները,

- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
- կրել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

- ensure the safety of the Company documents (Company Charter, documents certifying property rights to assets, internal documentation; charters of the separated subdivisions, annual reports, accounting documents, protocols of management meetings of the Company; and other documents required by the RA legislation);
- bear other liabilities defined under the RA legislation and this Charter.

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու պահից: Մասնակիցները կարող են փոփոխվել ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու կամ այն բռնագրավելու դեպքում:

4.2. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

- ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը՝ ներկա գտնվել ընդհանուր ժողովին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս,

4. PARTICIPANTS IN THE COMPANY, THEIR RIGHTS AND RESPONSIBILITIES

4.1. A person shall be considered a participant of the Company after registration as such in the log of the Company participants by the body performing the State registration of legal entities. The participants may be changed in accordance with the procedure set by the RA legislation and the Charter of the Company by means of dismissing participants, alieniation of the entire share, as well as in case of making an attachement or seizure of participant’s entire share.

4.2. The participants of the company are entitled to:

- participate in the management of the Company in accordance with the procedure set by the RA legislation and the present Charter, that is to be present at the general meeting, make proposals, participate in the discussion on the items included in the agenda and vote on the decisions to be made,

• ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրության 4.4 կետով սահմանված կարգով իր բաժնեմասը օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց,

• alienate its/his/her share to one or several participants of the Company or to third parties, as defined under point 4.4 of this Charter,

• ստանալ Ընկերության գործունեությունից ստեղծվող շահույթի մասը,

• to receive the share from the profit gained from the company's activities,

• Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ շահույթի իր մասը, ընկերության գույքի իր բաժնեմասին համապատասխան չափով, ինչպես նաև պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,

• in the event of liquidation of the company, receive his/her respective part of the profit and assets of the company in proportion equal to his/her share, as well as the part of the assets or its value remaining after the calculations made with the creditors,

• տեղեկություններ ստանալ Ընկերության գործունեության մասին,

• obtain information on the activities of the Company,

• ցանկացած պահի դուրս գալ Ընկերությունից (մյուս մասնակիցների համաձայնությունից անկախ),

• withdraw from the Company at any time (irrespective of the consent of the other participants),

• հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կողմից ընդունված և ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

• apply to the court for the purposes of challenging the decision of the General Meeting of the Company participants or Supervisory Board which are contradicting with the RA legislation,

• Ընկերության գույքի հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր,

• in case of increase in the Company's charter capital at the expense of Company assets obtain at no cost shares in respective amounts,

• օգտվել ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

• enjoy other rights prescribed by the RA legislation and Company Charter.

4.3. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

4.3. The participants of the company shall:

• Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ հաստատված կարգով կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում,

• make investments in the Company charter capital in accordance with the procedure approved by unanimous decisions of the General Meeting of Company participants,

• չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,

• refrain from disclosing confidential information on Company's activities,

• կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

• implement the obligations undertaken with respect to the Company,

• պահպանել սույն կանոնադրության դրույթները:

• respect the provisions of the present charter.

4.4. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

4.4.1 Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը վաճառել կամ այլ՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված ձևով օտարել երրորդ անձանց, ընդ որում մյուս մասնակիցները ունեն այդ բաժնեմասը երրորդ անձին առաջարկվող նույն գնով և պայմաններով ձեռքբերման նախապատվության իրավունք:

Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը գնելու իրենց նախապատվության իրավունքը, ապա վաճառող մասնակիցը ունի այդ բաժնեմասը վաճառելու/օտարելու իրավունք՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որ առաջարկվել է Ընկերության մասնակիցներին:

Օրենքով նախատեսված բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

4.4.2 Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակցի կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

4.4.3 Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օրացուցային օր սկսած այն պահից, երբ ստացվել է մասնակցի ծանուցումը իր բաժնեմասը վաճառելու ցանկության վերաբերյալ, որը ներառում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը տեղեկացված որոշում կայացնելու համար:

4.5. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր սեփականություն հանդիսացող բաժնեմասը (դրա մասը) գրավ դնել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց մյուս մասնակիցների նախնական գրավոր համաձայնությունը ստանալուց հետո:

4.4.Transferring the share in the Company's charter capital.

4.4.1 The participant of the Company is entitled to sell his/her share or alienate by other means not prohibited by the RA legislation to third parties whereby the other participant thereby enjoys a preemptive right to acquire that share to the same price and condition of that third party.

Should the other participants of the Company refrain from exercising their preemptive right to acquiring the share then the selling participants enjoys the preemptive right to sell/ alienate that share to that third party on the same conditions and by the price not less than the price offered to the Company participants.

Assignment of the preemptive right with respect to the shares specified by the law is prohibited.

4.4.2 In the event it is impossible to alienate the shares to third parties, based on the claim of the participant the Company shall acquire the share of the participant and within a year's time realize those to the other participants or third parties, or take a decision on decreasing the Company's Charter capital by paying off undistributed part of the shares.

4.4.3 The term for exercising the preemptive right is set at 30 calendar days from the moment of receiving the notification by the participant willing to sell its shares, subject to receiving all necessary information to making an informed decision.

4.5. The Company participant may pledge/mortage the shares (or its part) owned by him/her to one or more participants of the company or to third parties only after written approval of the other participants.

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 650,000,000 (վեց հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է Ընկերության մասնակիցների կողմից, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասը բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:

5.2. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրության 4.4. կետով սահմանված կարգով:

5.3. Ընկերությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումը ուժի մեջ է մտնում Կենտրոնական Բանկում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:

Ընկերության Կանոնադրական կապիտալի ավելացում հնարավոր է միայն նրա ամբողջությամբ վճարումից հետո: Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում կարող է կատարվել Ընկերության գույքի հաշվին, Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին, երրորդ անձանց ներդրումների հաշվին:

Ընկերության մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ավանդների հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի առնվազն 75%-ով ընդունված որոշմամբ: Այդ որոշմամբ պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքը, լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր

5. THE CHARTER CAPITAL OF THE COMPANY AND ITS AMMENDMENT

5.1. The Charter Capital of the Company comprises of 650,000,000 (Six Hundred Fithy Million) Armenian drams.

The Charter capital determines the minimum amount of the Company assets guaranteeing the interests of its creditors. The amount of the Charter Capital of the Company shall not be less than the minimum amount defined by the RA legislation.

The Company charter capital is fully paid by the Company participant, which are listed along with the share owned by them in the annex comprising an integral part of this charter.

5.2. The Company participants may alienate their shares in accordance with the procedure set under clause 4.4. of the present charter.

5.3. The Company can amend the value of the charter capital. The decision with that regard shall enter into force upon the state registration of the respective amendments in the Central Bank.

Increase of the Charter Capital of the Company is possible after its full paying in. Increase of the Charter Capital of the Company could be made on account of the Company assets or on account of additional deposits of the Participants, or on account of third parties' investments.

The decision on increase of the charter capital on account of additional deposits of the participants or third parties shall be made with a 75% of voting shares of the Company participants. This decision shall also determine the general value of additional deposits, define the proportion to the amount, equal for all participants, by which the nominal value of his/her share is being increased, as well as terms and procedure for making the investment. Within one month following the expiry of the

մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է նրա բաժնեմասի անվանական արժեքը, ինչպես նաև լրացուցիչ ավանդների վճարման ժամկետը և կարգը: Սահմանված ժամկետի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել (ընկերության մասնակիցների ձայների 75%-ով ընդունված) լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների, ներդրումների հաշվին ձևավորված կանոնադրական կապիտալի, Ընկերության մասնակիցների բաժնեմասերի չափերի փոփոխման և դրա հետ կապված սույն կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

defined term the General Meeting of the Company participants shall make a decision (adopted by 75% of voting shares of the company participants) on the results of investing additional deposits, the charter capital formed at the account of investments, the amendments to the value of the shares of Company participants and approval of the amendments to the present charter related to that.

Լրացուցիչ ավանդները ներդրվում են այդ մասին որոշում ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:

The additional deposits shall be invested within one year following the decision made thereon.

Ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

The terms and procedure for increasing the Charter capital at the account of making additional deposits by the Company participants are defined by the RA legislation.

Ընկերության մասնակցի դիմումի հիման վրա ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

The terms and procedure for increasing the Charter capital based on the application of the Company participant are defined by the RA legislation.

Ընկերությունն իրավունք ունի, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը ընկերության մասնակիցների ձայների 75%-ով ընդունված որոշման հիման վրա:

The Company is entitled to, and in the cases prescribed by the RA legislation shall reduce its charter capital with a decision taken by 75% of voting of voting shares of the Company participants.

Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազումը: Եթե Ընկերության նշված ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից՝ Ընկերությունը ենթակա է լուծարման:

If at the end of the second or each following financial year the net asset value of the Company is less than the charter capital, the Company must declare reduction in its charter capital and register the reduction in accordance with the defined procedure.
Should the value of the specified assets of the Company be less than the minimum charter capital as defined by the RA legislation than the Company shall be subject to liquidation.

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է նրա բոլոր պարտատերերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելուց հետո: Ընկերության պարտատերերն իրավունք ունեն պահանջել իրենց նկատմամբ Ընկերության պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ կատարում, ինչպես նաև իրենց վնասների հատուցում:
Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում կարող է կատարվել բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցմամբ և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարմամբ:
Կանոնադրական կապիտալի ավելացման կամ նվազեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխության ՀՀ կենտրոնական բանկում գրամցման պահից:
Ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Reduction of Company's charter capital is permitted upon notification of all creditors in accordance with the procedure set by the RA legislation.
The creditors of the company are entitled to claim additional guarantees for the obligations of the company owned to them or early termination of obligations or their implementation, as well as recovery of their loss.

Reduction of the Charter Capital of the Company could be implemented through reducing the nominal values of the shares belonging to all Company Participants and/or redeeming the shares belonging to the Company.

The decision on increase or reduction of the charter capital enters into force from the moment of registration of the respective amendmentby the RA Central Bank.
The attachment of or the seizure of the shares of the Company participant in the Company charter capital shall be conducted in the cases and according to the procedure stipulated by the RA legislation.

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

6.1. Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝
- Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ներդրված ավանդների և դրանց հաշվին ստեղծված գույքի,
- Ընկերության ձեռք բերված գույքի,
- ստացված եկամուտների,
- գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերած գույքի:

Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք ՀՀ օրենսդրությամբ համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:
Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու,

6. THE ASSETS and PROFIT OF THE COMPANY

6.1. The Company owns:
- The deposits made by the Company founders (participants) and the assets created therefrom,
- acquired property of the Company,
- Gained income,
- Property acquired by legal means.

The Company may enjoy ownership with respect to any property save for certain types of property, which cannot be in ownership of legal entities according to RA legislation.
The specifics of obtaining, terminating ownership rights of the Company with respect of property, disposal, use and management of assets, related to the fact that the property is under the Company's ownership, shall be defined by the RA legislation.

օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.2. Ընկերության մասնակցի ներդրումը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

Ներդրվող գույքի արժեքը որոշվում է Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) միջև համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական գնահատման:

Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) կամ Ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ներդրվող ոչ դրամային ավանդների դրամական գնահատականը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից միաձայն կարգով: Եթե Ընկերության մասնակցի ոչ դրամային ավանդով վճարվող բաժնեմասի անվանական արժեքը ՀՀ օրենդրությամբ սահմանված դեպքերում ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

Կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը գնահատվում է ՀՀ դրամով:

6.3. Եթե գույքը, նյութական արժեքները, ֆինանսական և այլ ռեսուրսները փոխանցվում են Ընկերությանը միայն օգտագործման նպատակով, ապա ներդրման չափը և համապատասխանաբար մասնակից-վարձատուի բաժնեմասը որոշվում է ելնելով այդ գույքի օգտագործման դիմաց տրվող վարձակալական վճարից:

6.4. Սահմանված կարգով առաջացող մաքուր շահույթի բաշխումը Ընկերության մասնակիցների միջև իրականացվում է կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. The investment made by the Company participant may be in the form of money, securities, other assets or property rights, as well as other rights which can have monetary evaluation.

The value of the invested property is determined by the based on a mutual consent between the founders (participants) of the Company and is subject to independent expert evaluation.

The monetary evaluation of the non-monetary deposits invested by the Company founders (participants) of third parties engaged in the Company shall be approved unanimously by the General meeting. In case prescribed by RA legislation the Company participant's share deposited in non-monetary means shall be assessed by an independed evaluator.

The shares of the participants in the Charter capital shall be assessed in RA drams.

6.3. In the event property, material assets, financial and other resources are transferred to the Company exclusively for the purposes of use, than the value of the investment and the share of the participant-lessee shall be respectively determined based on the amount of the rent that is paid in return for the use of such property.

6.4. The distribution of the net profit of the Company which originates in the defined procedure among the Company participants shall be made in accordance with their number of shares in Charter capital pursuant to the procedure set by the RA legislation.

7.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1. Ընկերության մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով), դիտորդ խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և Ընկերության

7. MANAGEMENT OF THE COMPANY

7.1. The Bodies of the company are: the General Meeting of Company Participants, Supervisory Board (hereinafter – the Board) and the executive

գործադիր մարմինը՝ գլխավոր գործադիր տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն) և Վարչությունը:

7.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկությունների ժամանակ Ընկերության մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

7.3. Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության Խորհուրդի կողմից տարեկան մեկ անգամ Ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան վեց ամիս անց: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողով՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության Խորհրդի կողմից ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ դա են պահանջում Ընկերության մասնակիցների շահերը:

7.4. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում

1) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2) Ընկերության կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռք բերումը և դրանց իրացումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում,

3) Ընկերության վերակազմակերպումը,

4) Ընկերության լուծարումը,

5) Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների) հաստատումը,

body – Chief Executive Officer (hereinafter - the Director) and Executive Board.

7.2. The highest body of the Company shall be the General Meeting of the Company Participants, which enjoys the right to making the final decision on any issue related to the management and functioning of the Company.

Each Company Participant has a number of votes in the General Meeting corresponding to his/ her share in the Charter Capital of the Company.

7.3. Regular General Meeting of Participants shall be called by the Board once a year not earlier than two months and not later than six months following the end of the financial year. The Company shall hold a regular General Meeting on annual basis for the approval of the annual results of the Company's activities.

An extraordinary General meeting of Company participants shall be called by the Board in the cases provided under the RA legislation and the Company Charter, when the interests of the Company participants so require.

7.4.The Competences of the General meeting of Company participants include:

1) making amendments and changes in the Company Charter, approving the new edition of the Company Charter;

2) acquisition and realization of share(s) by the Company in line with the procedure set by the RA legislation,

3) reorganization of the Company,

4) liquidation of the Company,

5) appointment of the liquidation commission, approval of the interim, summarizing and liquidation balance sheets

6) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

7) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

8) կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը,

9) կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) մասնակցության մասին որոշումների ընդունումը,

10) Ընկերության Տնօրենի և Վարչության անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Վարչության անդամների քանակական կազմի որոշումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը,

11) Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,

12) Ընկերության շահույթն ու վնասները ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը,

13) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

14) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

15) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունելը,

16) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը գերազանցում է Ընկերության զուտ ակտիվների մեծության 50 տոկոսը) կատարելու մասին որոշումը,

17) Ընկերության Դիտորդ խորհրդի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի ընդունումը,

18) ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը, բացառությամբ տնօրենի և Վարչության անդամների:

6) increase of the Charter capital of the Company,

7) reduction of the Charter capital of the Company,

8) establishment of organizations (including daughter companies and subsidiaries),

9) making decision with respect to the participation in the organizations (including daughter companies and subsidiaries),

10) appointment or dismissal of the Director of the Company, early termination of his/her competences, as well as issues of assigning the powers of the Company's executive body to a external manager (commercial entity or a private entrepreneur);

11) approval of annual reports and annual balance sheet;

12) issuing decision on distribution of the profit among the Company Participants;

13) determination of the quantitive composition of the Board, electing of the members of the Board, and early termination of their powers ,

14) determination of the main directions of the Company's activities,

15) adoption of decision on issuing securities by the Company,

16) taking a decision approving large-scale transactions related to the sale and acquisition of Company assets (the value of which exceeds 50% of the net assets of the Company);

17) Adoption of the documents regulating activities of the Supervisory Board,

18) determination of the conditions of remuneration for management personnel, except Director and the Executive Board.

19) conclusion of a loan/credit over EUR 50.000 (equivalent value in Armenian drams) per issuer.

19) 50,000 եվրո գումարի դրամային համարժեքը գերազանցող յուրաքանչյուր փոխառությունների\վարկերի ստացում,
20) գույքի կառավարման պայմանագրերի կամ այլ արտաքին ծառայությունների (օրինակ՝ ռիսկերի կառավարում) պայմանագրերի կնքում,
21) Ընկերության և Ընկերության մասնակիցների կամ Ընկերության մասնակիցների հետ փոխկապակցված անձանց միջև ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում, որոնք արժեքը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 20 տոկոսը,
22) Ընկերության արտաքին աուդիտի իրականացման վերաբերյալ որոշման ընդունում և արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը:

20) conclusion of asset management agreements or other outsourcing agreements (e.g., risk control).

21) conclusion of service agreements between the Company and a Company participant or an entity related to Company participants with at least 20% of the nominal capital.

22) adopting a decision on performing the external audit of the Company and approval of the person to be engaged in external auditing the Company.

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննակել և որոշումներ ընդունել նաև ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

The General Meeting of the Company participants is empowered to discuss and make decision on any matter that belongs to the competence of the General Meeting pursuant to the RA legislation and the present Charter.

7.5. Սույն կանոնադրության 7.4. կետի բոլոր ենթակետերով սահմանված հարցերը հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել ընկերության Խորհրդին կամ գործադիր մարմնին:

7.5. The matters stipulated under all sub-clauses of clause 7.4 of the present Charter belong to the exclusive competence of the General Meeting of Company participants and cannot be assigned to the Board or executive body of the Company.

7.6. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավազոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցները, որոնք համատեղ տիրապետում են ձայների ընդհանուր քանակի կեսից ավելիին:

7.6. The General Meeting of Company participants is valid (has a quorum) if it is attended by Company participants, who jointly make over 50 % of the general number of votes.

7.7. Սույն կանոնադրության 7.4 կետի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 19, 20 և 21 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընկերության բոլոր մասնակիցների ձայների 75%-ով, բոլոր այլ հարցերով որոշումները կայացվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների կեսից ավելիով:

7.7. The decisions on matters prescribed under clause 7.4 points 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 19, 20 and 21 shall be made by 75% of the votes of all the Company participants, on the other matters with a 50% of the votes of all Company participants.

7.8. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում՝

7.8. The solution of matters belonging to the competences of the General Meeting of Company Participants shall be solved in the General Meeting

օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ քվեարկության (հարցման) միջոցով: Այդ դեպքում որոշման նախագիծը ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

session through voting on the matters included in the session Agenda. In this case the draft decision shall be sent to the participants, who shall express their opinion in writing. Such voting may be conducted through exchange of documents through mail, telegraphic, facsimile, electronic means or other means which allow approving and verifying the authenticity of electronic or transferable messages and ensuring their documentary confirmation.

7.9. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

7.9. The decisions of the General meeting of Company participants are taken in open voting.

7.10. Մեկ մասնակից ունեցող ընկերությունում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասության հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունվում են մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր:

7.10. In a Company with a single participant the decisions on matters falling within the competence of the General meeting of Company participants shall be made by the participant unanimously and in writing.

7.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն (առանց ձայնի իրավունքի) Խորհրդի անդամները, Տնօրենը, Վարչության անդամները, ներքին աուդիտի անդամները, արտաքին աուդիտն իրականացնող անձը:

7.11. The following persons shall have the right to participate in the General Meeting (with no voting right): members of the Board, the Director, members of the Executive Board, the internal auditor, the person conducting the external audit.

7.12. Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում, այն պայմանով, որ այն ներկայացված լինի նիստը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

7.12. Each participant of the Company shall have the right to require the discussion of issues in the General meeting of company participants, provided that it shall be submitted not later than 10 days before the commencement of the session.

7.13. Ընկերության Խորհրդի անդամները ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից, ընդ որում Ամպեգա Ասսետ Մենեջմենթ ԳՄԲՀ ընկերությունը իրավունք ունի Խորհրդի կազմում առանց ընտրության նշանակել իր ներկայացուցչին: Ընկերության կողմից չեն կառավարվելու այնպիսի ներդրումային ֆոնդեր, որոնց ներդրողները/ներկայացուցիչները ՀՀ օրենսդրությանը համապատասխան պետք է ներգրավվեն Ընկերության Խորհրդի կազմում:

7.13. The members of the Supervisory Board of the Company shall be elected by the General Meeting of participants, whereby Ampega Asset Management GmbH shall have the right to appoint as a Board member its representative without any election. The Company shall not manage such investment fund where the investor/ representatives of that investment fund according to RA legislation are included in the Board.

7.14. Ընկերության Դիտորդ Խորհրդի իրավասությանն են վերապահված հետևյալ հարցերի մասին որոշումների ընդունումը՝

1) Ընկերության մասնակիցների տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը.

2) Ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը.

3) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը կազմում է Ընկերության զուտ ակտիվների մեծության 20-ից 50 տոկոսը) կատարելու մասին որոշումը.

4) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, ղեկավարների նշանակումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը.

5) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.

6) Ընկերության ներքին աուդիտի անդամների և ներքին աուդիտի ղեկավարի ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրումային ֆոնդերի ստեղծման և դրանց կառավարման վերաբերյալ որոշման ընդունումը.

8) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

9) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

10) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

11) Ընկերության ստեղծած (նրա կողմից կառավարվող) պայմանագրային ֆոնդի կանոնների և դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների հաստատումը.

12) Ընկերության՝ որպես ֆոնդի նոր կառավարիչ հանդես գալու դեպքում այդ ֆոնդի կանոնների ընդունումը.

13) Ընկերության ստեղծած (նրա կողմից կառավարվող) պայմանագրային ֆոնդի պահառության պայմանագրի կնքման և դրա գործողության դադարեցման, ինչպես նաև պահառության պայմանագրի՝ պահառուի հետ փոխհամաձայնեցված փոփոխության մասին որոշման կայացումը.

7.14. The following issues shall be under the competence of the Supervisory Board :

1) calling annual and extraordinary General Meeting of Company participants;

2) approval of General Meeting agenda;

3) taking a decision approving large-scale transactions related to the sale and acquisition of Company assets (the value of which comprises from 20% to 50% of the net assets of the Company);

4) establishment of separate divisions and institutions, appointment of their head officers, termination of activities, approval of their Charters;

5) approval of the annual results of the activities of the Company branches, representations and institutions;

6) election of the members and the chief of internal audit, and early termination of their authorities;

7) adopting a decision on investment fund establishment and/or fund management in the manner defined by the RA legislation;

8) approval of the organizational structure of the Company;

9) approval of the annual cost estimate and its execution;

10) approval of the staff list of the Company;

11) approval of the rules of the contractual fund established (managed) by the Company and amendments, supplements made therein;

12) adoption of the rules of the fund in case the Company acts as a new fund manager;

13) make decisions on signing and terminating a custody contract of the contractual fund established (managed) by the Company, as well as amendments to the custody contract agreed with the custodian;

14) Ընկերության կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի միացման և դադարեցման մասին որոշումների կայացումը.
15) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքում ֆոնդի կառավարման պայմանագրից միակողմանի հրաժարման մասին որոշման կայացումը.
16) Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (բացառությամբ Ընկերության խորհրդի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի) հաստատումը.
17) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կամ ընդհանուր ժողովի կողմից որոշված այլ հարցերով որոշումների ընդունումը և լիազորությունների իրականացումը:

14) make decisions on accession and termination of the contractual fund managed by the Company;

15) make a decision on unilaterally withdrawing the contract of the fund management in cases stipulated by RA legislation;

16) adoption of the documents regulating internal functions of the Company (except for the documents regulating the activities of the Board);

17) adopting other decisions and exercising other powers forseen by the legislation of RA or delegated by the General Meeting.

7.15. Ընկերության Խորհուրդը պետք է գործի և որոշումներ կայացնի ընդհանուր ժողովի կողմից ընդունված Կանոնակարգին համապատասխան:

7.15. The Supervisory Board shall act and adopt decisions according to the Regulation approved by the General Meeting.

7.16. Խորհրդի նախագահը և փոխնախագահը ընտրվում է Դիտորդ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

7.16. Chairman and Deputy Chairman of the Board shall be elected by the majority votes of the total quantity of members of Board.

7.17. Ընկերության Խորհրդի նախագահը՝
1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,
2) գումարում է խորհրդի նիստերն ու նախագահում դրանք,
3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
4) նախագահում է ընդհանուր ժողովներում:

7.17. Chairman of the Board shall:
1) organize the activities of the Board,
2) call Board sessions and chair therein,
3) organize keeping of session minutes,
4) chair the General Meeting:

7.18. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է խորհրդի փոխնախագահը:

7.18. In the absence of the Chairman of the Board, his/her duties shall be performed by the Deputy Chairman of the Board.

7.19. Խորհրդի իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով՝ Խորհրդի կանոնակարգով:

7.19. Board competences are stipulated by RA legislation and this Charter, as well as by the local acts and Regulation of the Board approved by the General Meeting.

7.20. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարությունը իրականացնում է Տնօրենը և Վարչությունը: Ընկերության Տնօրենը և Վարչության անդամները ընտրվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության և Ընկերության տնօրենի և Վարչության անդամների միջև պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը կամ ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձը: Տնօրենն իրականացնում է Վարչության նախագահի լիազորությունները:

7.20. Management of the current activities of the Company is carried on by the Director and the Executive Board. Director and the members of Executive Board shall be elected by the General meeting of Company participants. The agreement between the Company and the Director and the members of the Executive Board shall be signed by the chairman of the Board or by a person authorized by the General meeting. The Director shall act in the capacity of the Chaiman of the Executive Board.

Տնօրենը և Վարչությունը լուծում են բոլոր հարցերը, բացի Ընկերության մասնակիցների

The Director and the Executive Board solve all the issues, save for the matters which belong to the

ընդհանուր ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը ենթակա հարցերի: Տնօրենը և Վարչությունը կազմակերպում են Ընկերության ընդհանուր ժողովների և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու են ընդհանուր ժողովին և Խորհրդին և իրավունք չունեն Ընկերության մասնակիցների կամ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Խորհրդի կողմից ընդունված ներքին կարգերով և կանոններով սահմանվում են այն գործարքները, որոնք կնքման համար անհրաժեշտ է Խորհրդի կամ Վարչության հավանությունը:

Ընկերության Տնօրենը և Վարչության անդամները պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Ընկերության: Նրանք պարտավոր են Ընկերության կամ Ընկերության մասնակիցների պահանջով հատուցել իրենց կողմից Ընկերությանը պատճառված վնասները: Ընկերության պատճառած հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Ընկերությունը կամ նրա մասնակիցը:

7.21. Ընկերության տնօրենը իր իրավասության սահմաններում

- առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
- կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,
- բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
- իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի և Խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

7.22. Ընկերության Վարչությունը իր իրավասության սահմաններում.

- տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները և բանկային հաշիվները,
- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության

exclusive competence of the General Meeting of Company participants and the Board. The Director and the Executive Board organize the implementation of the decisions of General Meeting and the Board, are accountable to the General Meeting and the Board and are not empowered to take mandatory decisions for the Company participants and the Board.

The Board has to determine separately in way of internal rules and procedures which transactions need the prior approval of the Executive board and/or the Board.

The Director of the Company and members of the Executive Board shall act diligently and reasonably in the interest of the Company. They shall compensate the damage caused to the Company or Company participants by their fault. The Company or its participant is entitled to apply to the court with a claim for compensation of damage incurred by the Company.

7.21. The Company Director within his/her competences:

- Acts on behalf of the Company without a power of attorney;
- Executes agreements, including labour contract,
- Issues Powers of Attorney including such with the right to re-authorize,
- Opens bank accounts in banking institutions and other accounts,
- Performs other authorities vested by the RA legislation, Company charter or powers and assignments provided by the decisions of the Company General Meeting and the Board.

7.22. The Company Executive Board within its competences:

- disposes of Company assets, including financial resources and bank accounts,
- hires and dismisses the Company employees, apply incentives and

աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսարքի և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

- հաստատում է ներքին կարգապահական կանոններ,
- արձակում է Ընկերության աշխատակիցների համար պարտադիր կատարման ենթակա հրահանգներ և հրամաններ, վերահսկում դրանց կատարումը,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունը, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուներին, Ընկերության ներքին կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, Ընկերության հաստիքացուցակը,
- իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի և Խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ

disciplinary sanctions with respect to the Company employees,

- approves internal disciplinary rules,
- issues for the Company employees binding orders and instructions, exercises control over their execution,
- Submits for the Board approval charters of the Company's territorial subdivisions, candidates for the head officers of the territorial subdivisions, internal procedures of the Company, administrative-organizational structure of the Company, Company staff list,
- Performs other authorities vested by the RA legislation, Company charter or powers and assignments provided by the decisions of the Company General Meeting and the Board.

7.23. Ընկերության ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումներով Ընկերության Տնօրենին և Վարչությանը կարող են տրվել նաև այլ իրավասություններ:

7.23. The Director and Executive Board may be granted with other authorities by decisions of the General meeting of the Company and the Board.

8. ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

8. INTERNAL AND EXTERNAL AUDIT

8.1. Ընկերության ներքին աուդիտը Ընկերության գործունեության բոլոր մակարդակների նկատմամբ ներքին հսկողություն իրականացնող անկախ ստորաբաժանում է:

8.1. The Company internal audit is the independent subdivision which performs internal control over all levels of the Company activities.

8.2. Ներքին աուդիտորների քանակական կազմը և լիազորությունների ժամկետը սահմանում է Խորհուրդը: Խորդուրդը նաև նշանակում է ներքին աուդիտորներին:

8.2. Quantitive composition on the internal auditors and term of their authorities shall be defined by the Board. Internal auditors shall be appointed by the Board.

8.3. Ներքին աուդիտոր չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև Ընկերության, դրա ղեկավարների կամ այլ

8.3. The member of the Company management body, other head officers and employees, as well as any persons interrelated with the Company, its

աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:

8.4. Ներքին աուդիտը գործում է Խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի կանոնակարգով.

8.5. Ներքին աուդիտը.

- հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ,
- ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն ՀՀ օրենսդրությամբ, կարգավորվող շուկայի կանոններով, Ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին.
- տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:

8.6. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

8.7. Յուրաքանչյուր տարի Խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, որն առնվազն ներառում է՝

- այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում.
- առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը:

8.8. Ընկերության Տնօրենը և Վարչությունը պարտավոր են ապահովել բավարար պայմաններ ներքին աուդիտի իրավասությունների արդյունավետ իրականացման համար:

8.9. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերություն պետք է ներգրավի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ արտաքին աուդիտ: Արտաքին աուդիտն

head officers or other employees may not act as an internal auditor.

8.4. The internal audit shall act in accordance with the internal audit regulation approved by the Board.

8.5. The Internal audit shall:

- Implement control over the Company current activities and risks,
- Check the compliance of the Company activity to requirements defined by the RA legislation, rules of regulated market, rules of Company operations and other legal acts,
- Give conclusions and submit proposals on issues submitted by a competent management body, as well as on other issues.

8.6. Issues within the competence of internal audit may not be delegated to management bodies of the Company or other persons for settlement.

8.7. Each year the Board shall approve the annual internal audit program, which shall at least include:

- Areas, where auditing services shall be carried out.
- Description of audit observations of separate areas.

8.8. Director and the Executive Board shall ensure favorable conditions for implementation of efficient internal audit activities.

8.9. For the purposes of inspection of the financial and economic status the Company shall engage an independent external auditor entitled to provide audit services pursuant to the RA legislation. The external audit shall be carried out at least once in a year or more in cases prescribed by the RA legislation.

իրականացվում է տարին մեկ անգամ, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ ավելի հաճախ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1.Ընկերությունը, նրա մասնակիցների միաձայն որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Ընկերությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Ընկերությունը կարող է լուծարվել ներդրումային ֆոնդի կառավարման լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում:

9.2. Ընկերության վերակազմակերպման և լուծարման կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

9. REORGANIZATION AND LIQUIDATION OF THE COMPANY

9.1. The Company may be voluntarily reorganized or liquidated based on a unilateral decision of the Company participants.

The Company may be reorganized or liquidated in judicial proceedings only in accordance with the cases and procedure defined by the RA legislation. The Company may be liquidated in case of revocation of the investment fund manager license.

9.2. The procedure for reorganization and liquidation of the Company are prescribed under the RA legislation.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»

ՍՊԸ-ի մասնակիցների
Ցուցակ

հ/հ	Անուն, Ազգանուն / Անվանում	Բաժնեմասերի քանակը	Բաժնեմասերի չափը (դրամ)	Բաժնեմասի չափը
1.	«Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ» ՍՊԸ Գրանցված 1070, Վիեննա, Շոթենֆելդգասե 20, հասցեով, գրանցման համար FN 55148a	486 850	486 850 000	74.9%
2.	«Ամպեգա Ասսետ Մենեջմենթ» ԳՄԲՀ Ընկերություն Գրանցված Շարլ-դե-գոլլ փլաթց 1, Գերմանիա 50679 Քյոլն հասցեով, գրանցման համար HRB 61047	163 150	163 150 000	25.1%

Annex 1
To the Charter of
"C-QUADRAT Ampega Asset Management Armenia" LLC

List of Participants of "C-QUADRAT Ampega Asset Management Armenia" LLC

h/h	Name, Surname / Firm name	Number of Shares	Value of the Shares (AMD)	Value of the share
1.	C-QUADRAT Investment GmbH, Schottenfeldgasse 20, Austria-1070 Vienna, FN 55148a	486 850	486 850 000	74,9%
2.	Ampega Asset Management GmbH, Charles-de-Gaulle Platz 1, Germany-50679 Cologne, HRB 61047	163 150	163 150 000	25,1%